ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արամ Սիմոնյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арам Симонян (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Вирабян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Aram Simonyan (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 6
Оганнес Хорикян, К ВОПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ
Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA
Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ 14
Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE
Արգիշտի Վարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ 24
Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА 33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-XI Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 48
Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒԹՈՒՎՎԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) 55
Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՒՐԸ 63
Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR
Հովիկ Գրիգորյան, ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) 77
Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)
Վանիկ Վիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ. 95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА 137
Վալերի Թունյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ և ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 158
Рафик Наапетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ 166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. 174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019
Արման Եղիազարյան, Ալիկ Ղարիբյան, Դիանա Դավթյան, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 191
Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ 206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА
Haikaz Hovhannisyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ 214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
РЕЦЕНЗИЯ / REVIEW

Փայլակ Ենգոյան, էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ուհամալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.»), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: 222

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ 224

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 226
INFORMATION ABOUT THE AUTHORS 228

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 230
NOTICE FOR THE AUTHORS

Արման Եղիազարյան, Ալիկ Ղարիբյան, Դիանա Դավթյան

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ[1]

Բանալի բառեր. մոսկվահայ երիտասարդություն, ինքնություն, բաղադրիչներ, հարցում, համայնք, ցուցանիշ, երկու սերունդ, անցումային փուլ, համայնքային կյանք:

Մուտք. ԽՆԴՐԻ ԴՐՎԱԾՔԸ

Մոսկվայի հայ համայնքում երիտասարդությունն իրենից ներկայացնում է ուսումնասիրության թիրախային մի խումբ, որի շրջանում ինքնության բաղադրիչների և դրանց առնչվող երևույթների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ինքնության խնդիրների մասին ընդհանրապես և գալիքում կանխատեսելու որոշակի իրավիճակ: Մյուս կողմից, մոսկվահայ երիտասարդության շրջանում հայ ազգային ինքնության դրսևորումների խորքային իմացությունը հիմք է տալիս նախանշելու այն թիրախային ծրագրերը, որոնք պետք է մշակվեն մոսկվահայ երիտասարդության շրջանում հայապահպանության քաղաքականություն իրականացնելու և ազգային ինքնության բաղադրիչները ամրապնդելու հեռանկարով:

ՀԱՐՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտությունն իրականացվել է հարցման ճանապարհով՝ թիրախ խմբի երիտասարդին ուղղելով 15 հարց: Ըստ որում՝ հարցման մասնակիցները ընտրված են պատահականորեն, ուստի՝ նրանց շրջանում երբեմն հանդիպող գրեթե բացարձակ ընդհանրությունները (երկու ծնողների հայ լինելը, հայկական ավանդույթների պահպանության նկատմամբ վերաբերմունքը) չունեն ծրագրված բնույթ:

Հարցաթերթիկում ընդգրկված հարցերը մշակվել են առանձին հարցերին խորքային ու բազմակողմանի պատասխան ստանալու ակնկալիքով:

Տրվող հարցերի մի մասը նպատակ ունի պարզելու այնպիսի մանրամասներ, որոնք օգնում են խմբավորել հարցման մասնակիցներին, ինչպես, օրինակ՝ հարցման մասնակիցների սեռը, տարիքը, ծննդյան վայրը, Մոսկվայում բնակվելու սկզբունքը (ժամանակավոր, մշտական):

Հարցերի մյուս խումբը միտված է ճշգրտելու հարցման մասնակիցների ծնողների ազգությունը, նրանց՝ հայոց լեզվին տիրապետելու մակարդակը, որով հնարավորություն ենք ստանում պատճառահետևանքային կապ հաստատելու հարցվածների շրջանում հայ ազգային ինքնության վիճակի և ընտանիքում՝ ծնողների շրջանում գոյություն ունեցող իրողությունների միջև: Ուստի մոսկվահայ երիտասարդներին տրվել են համապատասխան հարցեր՝ միտված ճշգրտելու հայոց լեզվին տիրապետելու աստիճանը, խառնամուսնությունների, հայկական ավանդույթների պահպանության և Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը:

Հարցերի մյուս խումբը նպատակ ունի հարցվածների մեջ բացահայտելու այնպիսի կարևոր փաստեր, ինչպիսիք են համայնքային կյանքի մասնակցությունը, ՀՀ-ի հետ կապը և այլ կարևոր իրողություններ:

** Հոդվածը ներկայացվել է 27.11.2019 թ., գրախոսվել է 10.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:*

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «Մոսկվայի հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները XX դ. վերջին և XXI դ. սկզբին» գիտական ծրագրի (ծածկագիրը՝ 18RF-108) շրջանակներում:

Սույն հոդվածում ներկայացված են Մոսկվայի հայ համայնքի արդի վիճակի ուսումնասիրության նպատակով սույն ծրագրի շրջանակներում իրականացված դաշտային հետազոտության (21.06.2019 թ.-29.06.2019 թ.) և Մոսկվայի հայ երիտասարդության շրջանում իրականացված հարցման վերլուծության արդյունքները:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Մոսկվայի հայկական կազմակերպությունների ղեկավարներին, որոնց հետ անցկացվել են թեմատիկ և ընդհանրական մանրամասն հարցազրույցներ: Նրանք մեզ մեծապես աջակցել են, տրամադրել հնարավոր տեղեկատվություն:

Հատկապես շնորհակալ ենք Երիտասարդ պատմաբանների հայկական ընկերությանը՝ հարցման գործում ծավալուն աջակցության համար:

Վերոհիշյալ սկզբունքի համաձայն՝ հարցվածները հիմնականում «խմբավորված» են ըստ սեռի և Մոսկվայում բնակվելու ժամկետների (մինչև 10 տարի, 10-20 տարի և 20 տարուց ավելի Մոսկվայում բնակվողներ): Նման բաժանումը հնարավորություն է տալիս բացահայտելու կարևոր իրողություններ: Մասնավորապես, առանձին հարցերի առումով հարցվածների կողմից տրված պատասխանների ընդհանուր պատկերը հստակեցնելու համար հաճախ դիտարկելով նույն այդ պատասխանները Մոսկվայում մինչև 10 տարի, 10-20 տարի և 20 տարուց ավելի բնակվողների շրջանում, ստացել ենք անսպասելի արդյունքներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցվածները երիտասարդներ են: Նրանց կեսը 18-25 տարեկան են, իսկ մյուս կեսը՝ 25-30 տարեկան: Ի դեպ, հարցման մասնակիցների սեռային կազմն էլ բաշխվել է գրեթե 50 % տղա-50 % աղջիկ սկզբունքով: Նրանց 93 %-ը հարցման պահին ամուսնացած չէր:

Հարցվածների 95 տոկոսի երկու ծնողներն էլ հայ են: Սակայն այս գրեթե բացարձակ ցուցանիշը չպետք է խիստ հուսադրող լինի, քանի որ այդ իրողությունը չի ազդել, օրինակ, նույն այդ ծնողների զավակների շրջանում հայոց լեզվի տիրապետման և խառնամուսնությունների նկատմամբ վերաբերմունքի վրա:

Ընդհանուր առմամբ, հարցվածների ծննդյան վայրերի պատկերը հետևյալն է. Մոսկվայում է ծնվել հարցվածների 22 %-ը, Հայաստանում՝ 40 %-ը, այլ վայրերում՝ 38 %-ը: Ինչ վերաբերում է հարցվածների ծննդավայրերին ըստ նրանց՝ Մոսկվայում բնակվելու տևողության, ապա ունենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1. Հարցվածների ծննդավայրերը

Հարց. Որտե՞ղ եք ծնվել	Մոսկվա	ՀՀ	այլ վայր
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	0 %	41 %	59 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	34 %	34 %	32 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	30 %	38 %	32 %

Սակայն պետք է շեշտել, որ նրանց 95 %-ը Մոսկվայում բնակվում է մշտական հիմունքներով:

Հենց այս ցուցանիշներն են, որ մոսկվահայ երիտասարդության շրջանում կատարված հարցման արդյունքները դարձնում են հույժ քննարկելի, քանի որ հարցված հայ երիտասարդներից Մոսկվայում մինչև 10 տարի բնակվողների մեծ մասը այնտեղ տեղափոխվել է ոչ թե ՀՀ-ից, այլ ուրիշ քաղաքից կամ երկրից, ուստի այն կանխակալ միտքը, թե հենց առաջին խմբում պետք է արտացոլվեն հայկականության առավել բարձր ցուցանիշները, դառնում է սխալ: Մյուս կողմից, քանի որ մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդների մեջ ինքնըստինքյան չկան այդ քաղաքում ծնվածներ, ապա նույնիսկ հենց այդ խմբում արձանագրված՝ ՀՀ-ում ծնվածների առավել մեծ տոկոսը չի հանգեցնում այն բանին, որ մյուս խմբերի համեմատությամբ Հայաստանը հայրենիք համարելու, ՀՀ-ի հետ կապի, հայոց լեզվին տիրապետելու և նման այլ հարցերի պատասխանների առումով այստեղ արտահայտվեն առավել բարձր ցուցանիշներ:

ՄՈՍԿՎԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ընդունված է համարել, որ սփյուռքները չեն ձգտում կորցնել կապը հայրենիքի հետ[1] և դա ընդհանրական հատկանիշ է: Սակայն կապը հայրենիքի հետ ներառում է բարոյական (հայրենիքի ընկալում) և նյութական (հայրենիք այցելություններ) կողմեր, ուստի մոսկվահայ երիտասարդության՝ հայրենիքի հետ կապը հարկ է լուսաբանել հենց այդ կողմերով:

[1] Տե՛ս Թեոլեոլյան Խ., Ռուսահայ նոր սփյուռքի կազմակվորման հնարավորությունը ժամանակակից սփյուռքագիտության տեսանկյունից, «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2018, էջ 12:

Մոսկվահայ երիտասարդության շրջանում ՀՀ-ի հետ կապի ցուցանիշները պարզելու համար հարցվածներին տրվել են մի շարք հարցեր, մասնավորապես, Հայաստանը[1] որպես հայրենիք ընկալելու, ՀՀ-ի հետ պարբերական կապի, այնտեղ ազգականների առկայության և այլնի վերաբերյալ:

Հարցերը տրվել խիստ հստակ՝ հարցման արդյունքներում պարզություն ապահովելու նպատակով: Օրինակ, նախկինում հարցմանը մասնակիցները, այս հարցին պատասխանելիս, կարող էին նշումներ կատարել «Հայաստան», «Ռուսաստան», «ԽՍՀՄ» անվանումների դիմաց[2], իսկ սույն հարցումը միտված է պարզաբանելու զուտ նրանց վերաբերմունքը դեպի Հայաստանի Հանրապետությունը: Այս առումով հարցման արդյունքները խիստ հետաքրքրական են, քանի որ բոլոր երեք խմբերում էլ Հայաստանը հայրենիք համարողները կազմում են ընդհանուրի 2/3-ից ավելին:

Ի դեպ, հետաքրքիր է, որ հարցվածների մեջ բազմաթիվ են նրանք, որոնք բացասական են պատասխանել հարցին, բայց, միևնույն ժամանակ, Հայաստանը համարում են «պատմական հայրենիք», քանի որ ծնվել, ապրել և ապրելու են ՌԴ-ում և ՀՀ-ի հետ կապեր չեն պահպանում: Հարցման արդյունքները (տե՛ս աղյուսակ 2) ցույց են տալիս, որ մոսկվայում 10-20 տարի բնակվողների շրջանում Հայաստանը հայրենիք համարողների ցուցանիշն ամենաբարձրն է, թեև սպասելի էր, որ նման արդյունք կգրանցվեր ՀՀ-ում ծնվածների ավելի բարձր տոկոս ունեցող՝ Մոսկվայում մինչև 10 տարի և 20 տարուց ավելի բնակվողների խմբերում:

Աղյուսակ 2. Հայաստանի ընկալումը որպես հայրենիք

Հարց. Հայաստանը հայրենիք համարու՞մ եք	այո	ոչ	Հայաստանը համարում եմ իմ պատմական հայրենիքը
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	81 %	19 %	10
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	89 %	11 %	5
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	79 %	21 %	13

Նման արդյունքները մտորելու և հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտություն են առաջացնում, քանի որ կարող են արտածվել մի կողմից Մոսկվայում ինտեգրման անհրաժեշտությունից (մինչև 10 տարի Մոսկվայում բնակվողների շրջանում) և կամ տեղային պայմաններից, քանի որ ամեն համայնք ենթակա է տեղական պայմաններին ու առանձնահատկություններին[3], իսկ Մոսկվան, որպես ժամանակակից մեգապոլիս, օժտված է այնպիսի առնանձնահատկություններով, որոնք կարող են էապես ազդել այնտեղ 20 և ավելի տարիներ բնակվող հայ երիտասարդի աշխարհընկալման վրա:

Տեղին հավելենք, որ հարցվածների 89 տոկոսը Հայաստանում ազգականներ ունի: Բայց, չնայած դրան, ՀՀ այցելությունների պարբերականության ցուցանիշն այնքան էլ բարձր

[1] Անհրաժեշտ է պարզաբանել, որ որոշ տեղերում «Հայաստանի Հանրապետություն», իսկ որոշ տեղերում էլ՝ «Հայաստան» գրելու անհրաժեշտությունն առաջացել է այն պատճառով, որ երբ հարցման մասնակիցներին ուղղում ենք «Ի՞նչ հաճախականությամբ եք այցելում ՀՀ» կամ «Կցանկանայի՞ք ապրել ՀՀ-ում», ապա պարզ է, որ այստեղ ամեն ինչ միանշանակ է, և խոսքը Հայաստանի երրորդ Հանրապետության մասին է, իսկ երբ հարցնում ենք՝ «Հայաստանը հայրենիք համարու՞մ եք», ապա հարցման մասնակիցները դրական կամ բացասական պատասխան տալիս հաճախ հակադրում են Հայաստանն ու Հայաստանի Հանրապետությունը. դրական պատասխան տվողները հաճախ արտահայտվում են՝ նաև Արևմտյան Հայաստանը նկատի ունենալով, նմանապես բացասական պատասխանողներից շատերը կողմնորոշվում են նույն այդ նկատառումով, քանի իրենց պապերի ծննդավայրը ՀՀ-ի կազմում չէ:

[2] Տե՛ս Արտյոնյան Ю., Об армянской диаспоре в России (этносоциолигическое исследование армян Москвы и Краснодара), Ереван, 2011, с. 45.

[3] Տե՛ս Թեոլեոլյան Խ., նշվ. աշխ., էջ 13: «Ընդգծենք և կրկնենք՝ սփյուռքյան համայնքները տեղական, վայրային բնույթ ունեն»: Տե՛ս նույն տեղում, էջ 14:

չէ (տե՛ս աղյուսակ 3): Գուցե դա կապված է այն բանի հետ, որ հարցվածների միայն 20 %-ն է, որ ՀՀ-ում բնակարան ունի, թեև հենց վերջիններիս մեջ էլ գերակշռում են մի քանի տարին մեկ անգամ ՀՀ այցելողները:

Աղյուսակ 3. ՀՀ այցելությունների հաճախականությունը

Հարց. ի՞նչ հաճախականությամբ եք այցելում ՀՀ	ամեն տարի	մի քանի տարին մեկ	երբեք
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	41 %	50 %	9 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	42 %	48 %	10 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	43 %	46 %	11 %

Հարցման շրջանակներում ցանկալի էր նաև ճշտել ՀՀ-ում բնակվելու ցանկության ցուցանիշը մոսկվահայ երիտասարդության շրջանում: Ստորև բերված աղյուսակում (տե՛ս աղյուսակ 4) ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ առնվազն մոսկվահայ երիտասարդությունը իր մեծամասնության մեջ ՀՀ-ում ապրելու հնարավորությունը համարում է իրական:

Աղյուսակ 4. ՀՀ-ում ապրելու հավանականությունը

Հարց. կցանկանայի՞ք ապրել ՀՀ-ում	այո	ոչ
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	69 %	31 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	58 %	42 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	79 %	21 %

Հետաքրքիր է, որ մոսկվահայության շրջանում 2018 թ. իրականացված հարցման, որին մասնակցել էին մոսկվահայ տարբեր տարիքային խմբեր, արդյունքներով մինչև 10 տարի Մոսկվայում բնակվողների շրջանում հայրենադարձության հավանականության օգտին արտահայտվածների թիվը կազմում էր 65 %, իսկ 10-20 տարի բնակվողների շրջանում՝ միայն 20[1]: Փաստորեն, երիտասարդության շրջանում այս առումով ընկալումները էապես տարբերվում են:

Հայրենիքի հետ կապի ցուցանիշները արտացոլված են նաև այն բանում, որ մոսկվահայ երիտասարդության շրջանում ՀՀ-ի և Արցախի հանրապետության կյանքով հետաքրքրվողների թիվը կազմում է շուրջ 98 տոկոս:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼԸ[2]

Ընդունված է համարել, որ որևէ վայրում ստեղծվում է սփյուռքյան համայնք, ապա այն անցնում է երկու սերունդ տևող անցումային շրջան, որից հետո կա՛մ ձուլվում է, կա՛մ ձևա-

[1] Տե՛ս Եղիազարյան Ա., Սոլոպովա Օ., Մոսկվայի հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները XX դ. վերջին և XXI դ. սկզբին (ընդհանուր դիտարկումներ), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2018, էջ 43:

[2] Պետք է հիշել, որ մոսկվահայ երիտասարդության շրջանում հայոց լեզվի տիրապետման մասին նշում կատարելիս նպատակահարմար չհամարվեց առանձին ճշտելը՝ արդյո՞ք նրանք հայերենին տիրապետում են միայն խոսակցական մակարդակում, թե՞ նաև գրում ու կարդում են, քանի որ նրանց մեծամասնությունը (մոտ 60 %) հայերեն միայն խոսում է:

Սփյուռքների փորձը ցույց է տալիս, որ սփյուռքյան համայնքներում մայրենի լեզվի իմացությունը սերնդեսերունդ անկում է ապրում՝ հասնելով «կենցաղային», ասել է՝ նաև միայն խոսակցային մակարդակի: Տե՛ս Մարության Հ., Հայ ինքնության պահպանման հիմնախնդիրները սփյուռքի համայնքներում XXI դարասկզբին, «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2018, էջ 67:

վորվում որպես էթնիկական սփյուռք[1]: Այդ ընթացքում լուրջ ազդակներ են՝ ձևավորված ներքին դասակարգային համակարգը, ղեկավար վերնախավի ձևավորումը և կենցաղի ու մշակույթի հարցը[2]:

Քանի որ առաջին երկու ազդակները դուրս են սույն քննությունից, ապա կենտրոնանանք միայն երրորդի վրա: Այս առումով սփյուռքյան միջավայրում կարևորվում է հայերենին տիրապետելու հարցը: Հաշվի առնելով երկու սերունդ տևող անցումային շրջանի սկզբունքը՝ հարցման ընթացքում ճշտվել են հարցվածների ծնողների ազգությունը և հայերենին տիրապետելու հարցը:

Ինչպես նշվեց, հարցվածների 95 %-ի երկու ծնողներն էլ հայ են: Նրանց 83 %-ը հայերենին տիրապետում է ազատ, իսկ 17 %-ը՝ մասամբ: Նրանց մեջ չկա գոնե մեկը, որ հայերենին այս կամ այն չափով չի տիրապետում: Ի մասնավորի, հարցվածների ծնողների շրջանում հայերենին տիրապետելու ամենաբարձր ցուցանիշը՝ 84 %, արձանագրվել է Մոսկվայում 10-20 տարի բնակվողների խմբի շրջանում, իսկ մյուս երկու խմբի երիտասարդների ծնողների՝ հայերենին տիրապետելու ցուցանիշը նույնն է՝ 82 %:

Նրանց երեխաները (հարցված երիտասարդները) հայերենին տիրապետում են՝ 56 %-ը ազատ, 28 %-ը՝ մասամբ և 8 %-ը՝ չի տիրապետում համամասնությամբ: Հարցվածներից հայերենը սովորում է հարցվածների միայն 8 %-ը:

Ստորև ներկայացնում ենք մոսկվահայ երիտասարդության՝ տարբեր խմբերի շրջանում հայոց լեզվին տիրապետելու հարցման արդյունքները:

Աղյուսակ 5. Հայոց լեզվին տիրապետելու աստիճանը

Հարց. հայերենին տիրապետու՞մ եք	ազատ	մասամբ	չեմ տիրապետում	սովորում եմ
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	54 %	23 %	9 %	14 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	63 %	25 %	9 %	3 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	51 %	37 %	6 %	6 %

Աղյուսակը ցույց է տալիս, որ բոլոր խմբերում էլ հայերենին ազատ տիրապետելու ցուցանիշները բարձր են 50 %-ից: Կարելի է նշել, որ համայնքի կայացման՝ երկու սերունդ տևող անցումային շրջանի սկզբունքի սահմաններում դիտարկելով հայերենին տիրապետելու ցուցանիշները, հնարավոր է եզրակացնել, որ անցումային փուլն այս առումով ընդհանուր առմամբ հաղթահարված է, և մոսկվահայ երիտասարդության՝ հայերենին տիրապետելու ցուցանիշները վկայում են էթնիկ սփյուռքի ձևավորման մասին:

ԽԱՌՆԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Մոսկվահայ երիտասարդության շրջանում ազգային ավանդույթների պահպանության տեսանկյունից առավել էական՝ հայկական ընտանիք ձևավորելու առաջնահերթության գնահատման առումով կարևոր է խառնամուսնությունների նկատմամբ նրանց վերաբերմունքի ճշգրտումը: Հենց այստեղ է, որ հարցումը ստացել է խիստ անակնկալ արդյունքեր: Հարցման մասնակցին «Ինչպե՞ս եք վերաբերվում ամուսնությանը այլազգիների հետ» տողի դիմաց տրվել է վերաբերմունքն արտահայտելու երկու հնարավորություն՝ «դեմ եմ» և «անտարբեր եմ»: Ստորև սկզբում ներկայացվում է մոսկվահայ երիտասարդական խմբերի ընդհանուր պատկերը (տե՛ս աղյուսակ 6) և արդյունքները ըստ սեռերի՝ առանձին-առանձին (տե՛ս աղյուսակ 7 և 8):

[1] Տե՛ս Թեոլեոլյան Խ., նշվ. աշխ., էջ 17:
[2] Տե՛ս նույն տեղում:

Աղյուսակ 6. Մոսկվահայ երիտասարդության վերաբերմունքը խառնամուսնությանը

Հարց. Ինչպե՞ս եք վերաբերվում ամուսնությանը այլազգիների հետ (երկու սեռերի ընդհանուր պատկերը)	դեմ եմ	անտարբեր եմ
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	43 %	57 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	53 %	47 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	54 %	46 %

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ խառնամուսնությունները աստիճանաբար սկսում են դիտարկվել որպես բնականոն երևույթ: Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող երիտասարդների շրջանում գրանցված արդյունքները, թերևս, հետևանք են Մոսկվայում վերջերս մշտական բնակություն հաստատած երիտասարդների՝ քաղաքում արագորեն ինտեգրվելու ցանկության:

Առավել հետաքրքրական են խառնամուսնությունների նկատմամբ մոսկվահայ երիտասարդների՝ ըստ սեռերի վերաբերմունքը ցուցադրող արդյունքները: Մասնավորապես, տղաների շրջանում «դեմ եմ» պատասխանը խիստ գերակշռում է (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Մոսկվահայ տղաների վերաբերմունքը խառնամուսնությանը

Հարց. Ինչպե՞ս եք վերաբերվում ամուսնությանը այլազգիների հետ (տղաներ)	դեմ	անտարբեր
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	83 %	17 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	83 %	17 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	60 %	40 %

Մինչդեռ աղջիկների շրջանում խառնամուսնությունների նկատմամբ բացասական կամ անտարբեր վերաբերմունքի առումով արձանագրվել են գրեթե հավասար արդյունքներ (տե՛ս աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Մոսկվահայ աղջիկների վերաբերմունքը խառնամուսնությանը

Հարց. Ինչպե՞ս եք վերաբերվում ամուսնությանը այլազգիների հետ (աղջիկներ)	դեմ	անտարբեր
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	56 %	44 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	46 %	54 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	55 %	45 %

Հետաքրքրական է, որ խառնամուսնությունների նկատմամբ նշված վերաբերմունքի պայմաններում Մոսկվայի համայնքում հայկական ավանդույթների պահպանման կողմնակից է հարցման մասնակիցների 98 %-ը և միայն 2%-ը, այն էլ միայն իգական սեռի ներկայացուցիչներ, այդ հարցում անտարբեր են:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվահայ երիտասարդության շրջանում համայնքային կյանքին մասնակցության չափի հստակեցումը կարևոր պայման է մի կողմից նրանց համար համայնքային կազմակեր-

պությունների նկատմամբ համակրանքը հստակեցնելու, իսկ մյուս կողմից հայկական միջոցառումների նկատմամբ հետաքրքրության չափը պարզաբանելու տեսակետից:

Որպես օրինակ ներկայացնենք 2012 թ. տեղի ունեցած մի իրադարձություն, որը վկայում է համայնքային կյանքին մասնակցության՝ մոսկվահայ երիտասարդության ցանկության մասին: 2012 թ. նոյեմբերի 16-18-ը Դոնի Ռոստովում կայացավ ԱՊՀ երկրներում գործող հայկական երիտասրդական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների՝ «21-րդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը» խորագիրը կրող առաջին երիտասարդական համաժողովը՝ Նոր Նախիջևանի հայ համայնքի և ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ Մոսկվայում, Կրասնոդարում, Մոզդոկում, Կիսլավոդսկում, Օրենբուրգում, Նիժնի Նովգորոդում, Պերմում ու Ուկրաինայում, Բելառուսում գործող երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ [1]: Համաժողովը խնդիր դրեց երիտասարդությանը ավելի ակտիվորեն ներգրավել համայնքային գործերին՝ մշակելով համապատասխան ծրագրեր:

Հարցման արդյունքներն այս պարագայում քննարկելու հետաքրքիր նյութ են տրամադրում: Ընդհանուր և մասնավորեցված արդյունքների ներկայացման շահեկանությունից ելնելով՝ սկզբում ներկայացրել ենք ընդհանուր պատկերը, իսկ այնուհետև՝ արդյունքները՝ ըստ հարցված երիտասարդների՝ Մոսկվայում բնակվելու ժամկետների:

«Մասնակցու՞մ եք համայնքային կյանքին» հարցին հարցվածների 32 %-ը տվել է դրական պատասխան, 25 %-ը՝ բացասական, իսկ 54 %-ը միայն երբեմն է մասնակցում (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Հանայնքային կյանքին մոսկվահայ երիտասարդության մասնակցության ընդհանուր պատկերը

Հարց. մասնակցու՞մ եք համայնքային կյանքին	այո	ոչ	երբեմն
	22 %	25 %	53 %

Պետք նշել, որ նման ընդհանրական պատկերը գոհացուցիչ է այն պարզ պատճառով, որ երիտասարդության ավելի քան 80 %-ը այս կամ այն չափով մասնակցում է համայնքային կյանքին: Ըստ որում, ենթահարցերն այստեղ ձևակերպված են այնպես, որ «այո» կամ «ոչ» պատասխանողները, «երբեմն» տարբերակի առկայության պարագայում, տալիս են միանշանակ պատասխան՝ փաստորեն ընդգծելով, որ մշտապես մասնակցում են կամ մշտապես չեն մասնակցում: Ի դեպ, «երբեմն» պատասխանի տիրույթը զգալիորեն ընդարձակ է. հաճախ տարեկան համայնքային մեկ միջոցառման մասնակցությունը հիմք է դառնում, որ հարցման մասնակիցը համապատասխան նշում կատարի:

Պատկերը մոսկվահայ երիտասարդության որոշակի խմբերի առումով (օրինակ՝ մինչև 10 տարի քաղաքում բնակվողների խմբի) դրականորեն փոփոխվում է, երբ հարցման արդյունքը մասնավորեցնում ենք ըստ Մոսկվայում բնակության ժամկետի (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Հանայնքային կյանքին մոսկվահայ երիտասարդության մասնակցության պատկերը ըստ առանձին խմբերի

Հարց. մասնակցու՞մ եք համայնքային կյանքին	այո	ոչ	երբեմն
Մինչև 10 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	29 %	19 %	52 %
10-20 տարի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	22 %	34 %	44 %
20 տարուց ավելի Մոսկվայում բնակվող հայ երիտասարդներ	23 %	27 %	50 %

[1] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, Ե., 2012, էջ 142:

Ըստ խմբերի՝ մոսկվահայ երիտասարդության մասնակցության ցուցանիշները ցույց են տալիս, որ համայնքային աշխատանքներում նրանց ընդգրկման հարցում ծավալուն անելիքներ կան, որոնք, չնայած վերոհիշյալ երիտասարդական համաժողովի որոշման, դեռևս իրականացված չեն:

ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՎ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հարցման արդյունքերով՝ այսօր այլ համայնքներով հետաքրքրվողների թիվը Մոսկվայի հայ երիտասարդների շրջանում 45 % է: Այս ցուցանիշը, սակայն, միայն անվանական չէ, այլ գործնական: Մասնավորապես, 2016 թ. ապրիլի 24-ին Ռուսաստանի հայերի միության երիտասարդական և Մոսկվայի հայ երիտասարդների ասոցիացիաները մասնակցեցին ՌՀՄ-ի և Հայ-ռուսական համագործակցություն կազմակերպության կողմից Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին Դոնի Ռոստովում կազմակերպած հանրահավաքին, որին մասնակցում էին նաև Դոնի Ռոստովի հայ համայնքի բոլոր տարիքային խմբերի ներկայացուցիչները[1], ինչը հուշում է, որ մոսկվահայ երիտասարդությունը հետաքրքրված է հատկապես Հայոց ցեղասպանության խնդիրների շուրջ համագործակցելու այլ համայնքների հայ երիտասարդության հետ:

Այդ իրողությունը չավազանց հետաքրքրական է, քանի որ Հայոց ցեղասպանության հիշողությունը սփյուռքահայ ինքնության արտահայտման հիմնական եղանակ էր դարձել դասական սփյուռքում՝ ապրիլի 24-ի և հարակից միջոցառումների իրականացմամբ[2]: Փաստորեն, նույն հիշողությունը դառնում է ինքնության դրսևորման և պայքարի եղանակ նաև հետխորհրդային հայկական սփյուռքի պարագայում:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել, որ ինքնությանն առնչվող երևույթների վերաբերյալ հարցման արդյունքները ի հայտ են բերում մի շարք էական իրողություններ, որոնք նոր լույս են սփռում մոսկվահայ երիտասարդության շրջանում ինքնության դրսևորումների վրա: Հնարավորինս բացահայտվում են մոսկվահայ երիտասարդների խմբերը, նրանցից յուրաքանչյուրում հայրենիքի հետ կապերի, հայոց լեզվի տիրապետման մակարդակի, խառնամուսնությունների նկատմամբ վերաբերմունքի, համայնքային կյանքին մասնակցության և այլ կարևոր ցուցանիշները:

Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ. В армянской общине Москвы молодежь является объектом отдельного этносоциологического исследования. Изучение уровня компонентов идентичности среди московской армянской молодежи и различных связанных с ними явлений позволяет выявить проблемы и предвидеть конкретную ситуацию в будущем. С другой стороны, тщательное изучение проявлений армянской национальной идентичности среди армянской молодежи Москвы дает основу для определения основных программ, которые должны быть разработаны с целью сохранения армянской идентичности и усиления ее компонентов.

Подводя итоги исследования, можно отметить, что результаты выявили ряд существенных фактов, которые пролили новый свет на проблему сохранения национальной идентичности среди московской армянской молодежи.

В ходе исследования были выявлены группы армянской молодежи в Москве, выделены их основные характеристики с показателями связи с родиной, уровнем знания армянского языка, отношением к смешанным бракам и участию в общественной жизни.

Ключевые слова: армянская молодежь Москвы, идентичность, компоненты, опрос, сообщество, показатель, два поколения, переходный период, общественная жизнь.

[1] Տե՛ս նույն տեղում, 2016, էջ 146:
[2] Տե՛ս Մարության Հ., նշվ. աշխ., էջ 73:

Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH. In the Armenian community of Moscow, youth is an object of a separate ethnosociological study. Studying the level of identity components among the Moscow Armenian youth and various phenomena associated with them allows us to identify problems and anticipate a specific situation in the future. On the other hand, a thorough study of the manifestations of Armenian national identity among the Armenian youth of Moscow provides the basis for identifying the main programs that should be developed with the aim of preserving the Armenian identity and strengthening its components.

Summing up the results of the study, it can be noted that the results reveal a number of significant facts that shed new light on the problem of preserving national identity among Moscow Armenian youth.

The study identified groups of Armenian youth in Moscow, highlighted their main characteristics with indicators of connection with the homeland, level of knowledge of the Armenian language, attitude to mixed marriages and participation in public life.

Keywords: Armenian youth of Moscow, identity, component, survay, community, indicator, two generations, transition period, community life.